ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 23251.8 մլն դրամ՝ պլանավորված 22202.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 4.7 տոկոսով կամ 1049.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 84.8 տոկոսով կամ 10671.0 մլն դրամով, որից 8946.0 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Մայիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4188.5 մլն դրամ՝ պլանավորված 3980.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 5.2 տոկոսով կամ 208.5 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 41.7 տոկոսով կամ 1233.7 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 72 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 5 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 32 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 112.3 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 21 ստուգում՝ 105.4 մլն դրամ գումարով:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում շարունակվել են հսկողական միջոցառումները, որոնց արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 6 և ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 1 դեպք:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 94 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 72-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ական՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման ու հարկային հաշվանցումների և

վերադարձի հիմնավորվածության, 5-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 5 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 10 վարչական գործ՝ 9.5 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 1 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 0.2 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 80 վարչական գործով սահմանվել է 1.2 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6336 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5800:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 44 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 113 վարձու աշխատողի՝ 17.6 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 53 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է «Արցախի Հանրապետությունում արտադրվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված՝ չօգտագործված և (կամ) վնասված «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշների մնացորդների դուրսգրման ու ոչնչացման աշխատանքների կազմակերպման մասին» հրամանը:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

01.05.2018թ. դրությամբ ամփոփվել և հրատարակման է ներկայացվել «Հարկեր, տուրքեր և վճարներ» ժողովածուն:

Մայիսի 24-ին ֆինանսների նախարարի առաջին տեղակալի գլխավորությամբ կայացել է աշխատանքային խորհրդակցություն հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ, որի ընթացքում քննարկվել են 2018 թվականի 1-ին եռամսյակի և ապրիլ ամսվա պետական բյուջեի՝ հարկային մարմնի

կողմից վերահսկվող եկամուտների կատարողականը, մայիս ամսում մուտքերի հավաքագրման ընթացքը, 2018 թվականի 1-ին եռամսյակում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ԱՀ տարածք ներմուծված և արտահանված ապրանքանյութական արժեքների հաշվառման և հայցային աշխատանքների կազմակերպման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ հարցեր:

Հաշվետու ամսում ֆինանսների նախարարի առաջին տեղակալը մասնակցել է «Հարկային մարմինների ներեվրոպական» (IOTA) միջազգային կազմակերպության կողմից Վարշավա քաղաքում կազմակերպված հարկային մասնագիտացված կրթության և զարգացման ֆորումին:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հաշվետու ամսում հարկային ծառայողների մասնագիտական պատրաստվածության ու արհեստավարժության բարձրացման նպատակով հարկ վճարողների սպասարկման, հաշվառման և վերահսկողական գործառույթ իրականացնող թվով 92 աշխատակիցների համար կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ՝ «Հարկերի և պարտադիր վճարների հաշվարկում», «Հարկային հսկողություն և ստուգումներ», «Վերլուծությունների իրականացման ընթացակարգեր և կիրառվող գործիքներ», «Անձնական հաշվի քարտերի վարում», «Հաշվապահական հաշվառման ստանդարտներ, հաշվապահական ձևակերպումներ» և «ԱՀ տարածք ներմուծվող և արտահանվող ԱՆԱ-ների հաշվառում» թեմաներով:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել պայմանագրային հիմունքներով հարկային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու նպատակով հարցազրույց անցկացնելու մասին հայտարարություն:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 279, ելքագրվել՝ 157 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: